Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2014թ. հոկտեմբերի 14-ին ստորագրված «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագրի հայերեն պաշտոնական թարգմանությունն է:

**Հայաստանի Հանրապետության**
**արտաքին գործերի նախարարություն**

## «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ԻՐԱՎԱՍՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հաշվի առնելով, որ «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման մասին» իրավասու մարմինների բազմակողմ համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրող կողմերի պետությունները «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» Եվրոպայի խորհրդի եւ ՏՀԶԿ-ի համատեղ կոնվենցիայի կամ «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) փոփոխող արձանագրությամբ փոփոխված «Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին» կոնվենցիայի կողմերն են կամ դրանցում նշված տարածքներն են կամ ստորագրել են կամ ցանկություն են հայտնել ստորագրելու Կոնվենցիան եւ ընդունել են, որ Կոնվենցիան պետք է իրենց համար ուժի եւ գործողության մեջ մտնի մինչեւ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների առաջին փոխանակումը,

հաշվի առնելով, որ պետությունները ցանկանում են հարկային հարցերով փոխադարձ աջակցության ուղղությամբ իրենց հարաբերություններն էլ ավելի զարգացնելու միջոցով բարելավել միջազգային հարկային պարտավորությունների կատարումը,

հաշվի առնելով, որ ՏՀԶԿ-ն Մեծ քսանյակի երկրների հետ մշակել է Միասնական հաշվետվողական ստանդարտ՝ հարկերից խուսափելու եւ շրջանցելու դեմ պայքարելու եւ հարկային օրենսդրության կատարումը բարելավելու նպատակով,

հաշվի առնելով, որ Կոնվենցիան ստորագրած կամ ստորագրելու ցանկություն հայտնած երկիրը կհամարվի սույն Համաձայնագրի 1-ին հոդվածում սահմանված իմաստով Պետություն միայն Կոնվենցիայի կողմ դառնալու դեպքում,

հաշվի առնելով, որ համապատասխան Պետությունների օրենքներով ֆինանսական հաստատություններից պահանջվում է կամ ակնկալվում է, որ պետք է պահանջվի առանձին հաշիվների վերաբերյալ տեղեկությունների հաղորդում եւ դրա հետ կապված պատշաճ ստուգումների ընթացակարգերի իրականացում՝ սույն Համաձայնագրի 2-րդ հոդվածում ներկայացվող՝ փոխանցման շրջանակին, ինչպես նաեւ Միասնական հաշվետվողական ստանդարտում սահմանված հաշվետվությունների ներկայացման եւ պատշաճ ստուգումների ընթացակարգերին համապատասխան,

հաշվի առնելով, որ ակնկալվում է, որ Պետությունների օրենսդրությունները ժամանակ առ ժամանակ կենթարկվեն փոփոխությունների՝ Միասնական հաշվետվողական ստանդարտում կատարված թարմացումները արտացոլելու համար, եւ Պետության կողմից այս փոփոխությունները ընդունվելուն պես կհամարվի, որ այդ Պետության համար Միասնական հաշվետվողական ստանդարտի սահմանումը վերաբերում է թարմացված տարբերակին,

հաշվի առնելով, որ Կոնվենցիայի III գլխով թույլատրվում է հարկային նպատակներով տեղեկությունների փոխանակումը, այդ թվում՝ տեղեկությունների ավտոմատացված փոխանակումը, եւ Պետությունների իրավասու մարմիններին թույլատրվում է համաձայնեցնել այդ ավտոմատ փոխանակումների շրջանակը եւ եղանակները,

հաշվի առնելով, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով սահմանվում է, որ երկու կամ ավելի Կողմեր կարող են փոխհամաձայնության գալ տեղեկություններն ավտոմատ ձեւով փոխանակելու վերաբերյալ, եւ որ տեղեկությունների փոխանակումը իրավասու մարմինների միջեւ կլինի երկկողմ սկզբունքով,

հաշվի առնելով, որ մինչեւ առաջին փոխանակումը Պետություններում գործում է կամ ակնկալվում է, որ պետք է գործի հետեւյալը՝ i) համապատասխան երաշխիքներ՝ սույն Համաձայնագրի համաձայն ստացված տեղեկությունների գաղտնիությունը եւ միայն Կոնվենցիայում սահմանված նպատակներով դրանց օգտագործումն ապահովելու համար, եւ ii) փոխանակման արդյունավետ հարաբերությունների ապահովմանն ուղղված ենթակառուցվածքներ (այդ թվում՝ սահմանված գործընթացներ՝ ուղղված տեղեկությունների ժամանակին, ճշգրիտ եւ գաղտնի ձեւով փոխանակմանը, արդյունավետ ու վստահելի հաղորդակցության եւ փոխանակման հետ կապված հարցերն ու խնդիրները լուծելու կամ փոխանակման հարցումները կատարելու, ինչպես նաեւ սույն համաձայնագրի 4-րդ հոդվածի դրույթները կատարելու կարողությունների ապահովմանը),

հաշվի առնելով, որ Պետությունների իրավասու մարմինները ցանկանում են Կոնվենցիայի հիման վրա տեղեկությունների ավտոմատ փոխանակման միջոցով միջազգային հարկային պարտավորությունների կատարումը բարելավելու նպատակով կնքել համաձայնագիր՝ չխախտելով ներպետական օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը (առկայության դեպքում), պահպանելով ԵՄ օրենսդրությունը (կիրառելիության դեպքում) եւ կատարելով Կոնվենցիայով նախատեսված՝ գաղտնիության եւ պաշտպանության այլ եղանակների վերաբերյալ դրույթները, ներառյալ՝ դրա համաձայն փոխանակված տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթները՝

Իրավասու մարմինները համաձայնեցին հետեւյալի մասին.

## *ՀՈԴՎԱԾ 1*

### **Սահմանումները**

1. Սույն Համաձայնագրի նպատակներով հետեւյալ եզրույթներն ունեն հետեւյալ իմաստները.

ա) **«Պետություն»** եզրույթը նշանակում է երկիր կամ տարածք, որի համար Կոնվենցիան գտնվում է ուժի եւ գործողության մեջ՝ կա՛մ 28-րդ հոդվածի համաձայն այն ստորագրելու եւ վավերացնելու միջոցով, կա՛մ 29-րդ հոդվածի համաձայն գործողության աշխարհագրական ոլորտն ընդլայնելու միջոցով, եւ որը համարվում է սույն Համաձայնագիրը ստորագրող կողմ.

բ) **«Իրավասու մարմին»** եզրույթը յուրաքանչյուր համապատասխան Պետության համար նշանակում է Կոնվենցիայի Հավելված Բ-ում նշված անձինք եւ մարմինները,

գ) **«Պետության ֆինանսական հաստատություն»** եզրույթը յուրաքանչյուր համապատասխան Պետության համար նշանակում է՝ i) Պետության ռեզիդենտ ցանկացած ֆինանսական հաստատություն՝ բացառությամբ այդ ֆինանսական հաստատության այն մասնաճյուղի, որը գտնվում է Պետության տարածքից դուրս, եւ ii) Պետության ոչ ռեզիդենտ ֆինանսական հաստատության ցանկացած մասնաճյուղ, եթե այդ մասնաճյուղը գտնվում է Պետության տարածքում.

դ) **«Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատություն»** եզրույթը նշանակում է Պետության ցանկացած ֆինանսական հաստատություն, որը չի համարվում Հաշվետվություն չտրամադրող ֆինանսական հաստատություն,

ե) **«Հաշվետվության ենթակա հաշիվ»** եզրույթը նշանակում է Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատության կողմից բացված Ֆինանսական հաշիվ, որը Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված պատշաճ ստուգումների ընթացակարգերի համաձայն նշվել է որպես մեկ կամ ավելի անձանց պատկանող հաշիվ, որոնք մեկ այլ Պետության համար համարվում են Հաշվետվության առարկա հանդիսացող անձինք, կամ Պասիվ ոչ-ֆինանսական անձին պատկանող հաշիվ, որն ունի Մեկ կամ ավելի հսկող անձինք, որոնք մեկ այլ Պետության համար համարվում են Հաշվետվության առարկա հանդիսացող անձինք,

զ) **«Միասնական հաշվետվողական ստանդարտ»** եզրույթը նշանակում է հարկային հարցերով ՏՀԶԿ-ի կողմից Մեծ քսանյակի երկրների հետ համատեղ մշակված՝ ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման ստանդարտ (որը ներառում է Մեկնաբանությունները),

է) **«Համակարգող մարմնի քարտուղարություն»** եզրույթը նշանակում է ՏՀԶԿ-ի քարտուղարություն, որը, համաձայն Կոնվենցիայի 24-րդ հոդվածի 3-րդ կետի, աջակցություն է տրամադրում Կոնվենցիայի կողմ հանդիսացող իրավասու մարմինների ներկայացուցիչներից կազմված համակարգող մարմնին:

ը) **«Գործողության մեջ մտած համաձայնագիր»** եզրույթը ցանկացած երկու Իրավասու մարմնի համար նշանակում է, որ երկու Իրավասու մարմինները արտահայտել են տեղեկությունները միմյանց հետ ավտոմատ ձեւով փոխանակելու ցանկություն եւ բավարարել են 7-րդ հոդվածի 2.1 ենթապարբերության մեջ սահմանված մյուս պայմանները: Իրավասու մարմինները, որոնց համար սույն Համաձայնագիրը մտել է գործողության մեջ, նշված են Հավելված Ե-ում:

2. Մեծատառով գրված ցանկացած այլ եզրույթ, որի սահմանումը տրված չէ սույն Համաձայնագրում, կունենա այն իմաստը, որն այն ունի տվյալ ժամանակահատվածում Համաձայնագիրը կիրառող Պետության օրենսդրությամբ, եթե այդ իմաստը համապատասխանում է Միասնական հաշվետվողական ստանդարտում սահմանված իմաստին: Սույն Համաձայնագրում կամ Միասնական հաշվետվողական ստանդարտում չսահմանված ցանկացած եզրույթ համատեքստով այլ բան չպահանջվելու կամ Իրավասու մարմինների կողմից այլ ընդհանուր իմաստի շուրջ համաձայնության չգալու դեպքում (ներպետական օրենքով սահմանված կարգով) կունենա այն իմաստը, որն այն ունի տվյալ ժամանակահատվածում սույն Համաձայնագիրը կիրառող Պետության օրենսդրությամբ, տվյալ Պետության գործող հարկային օրենսդրությամբ նախատեսված ցանկացած իմաստ, որը գերակա է տվյալ Պետության այլ օրենքներով եզրույթին տրված իմաստի նկատմամբ:

## *ՀՈԴՎԱԾ 2*

## Հաշվետվության ենթակա հաշիվների վերաբերյալ տեղեկությունների փոխանակումը

1.1. Համաձայն Կոնվենցիայի 6-րդ եւ 22-րդ հոդվածների դրույթների եւ Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված հաշվետվության տրամադրման եւ պատշաճ ստուգումների կիրառվող կանոններին համապատասխան՝ յուրաքանչյուր Իրավասու մարմին այլ Իրավասու մարմնի հետ, որի համար սույն Համաձայնագիրը համարվում է գործողության մեջ մտած, յուրաքանչյուր տարի ավտոմատացված ձեւով կփոխանակի այդ կանոնների համաձայն եւ 2-րդ պարբերության մեջ նշված կարգով ձեռք բերված տեղեկությունները:

1.2. Չնայած նախորդ պարբերությանը՝ Հավելված Ա-ում նշված Պետությունների Իրավասու մարմինները կուղարկեն, սակայն չեն ստանա 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունները: Հավելված Ա-ում չնշված Պետությունների Իրավասու մարմինները մշտապես կստանան 2-րդ պարբերության մեջ նշված տեղեկությունները: Իրավասու մարմիններն այդ տեղեկությունները չեն ուղարկի Հավելված Ա-ում նշված Պետությունների Իրավասու մարմիններին:

2. Մյուս Պետության՝ հաշվետվության ենթակա յուրաքանչյուր հաշվի մասով փոխանակման ենթակա տեղեկություններ են համարվում՝

ա) հաշվի Հաշվետեր՝ Հաշվետվության առարկա հանդիսացող անձի անունը, հասցեն, ՀՎՀՀ-ն (ՀՎՀՀ-ները), ծննդյան ամսաթիվը եւ վայրը (ֆիզիկական անձ լինելու դեպքում), իսկ Հաշվետեր հանդիսացող ցանկացած իրավաբանական անձի դեպքում, որը Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված պատշաճ ստուգումների ընթացակարգերի կիրառումից հետո նշվում է որպես մեկ կամ ավելի Հսկող անձինք ունեցող, որոնք համարվում են Հաշվետվության առարկա հանդիսացող անձ՝ իրավաբանական

անձի անվանումը, հասցեն եւ ՀՎՀՀ-ն (ՀՎՀՀ-ները), ինչպես նաեւ Հաշվետվության առարկա հանդիսացող յուրաքանչյուր անձի անունը, հասցեն, ՀՎՀՀ-ն (ՀՎՀՀ-ները).

բ) հաշվեհամարը (կամ հաշվեհամարի բացակայության դեպքում՝ գործառութային առումով դրա համարժեքը),

գ) Հաշվետվություն ներկայացնող ֆինանսական հաստատության անվանումը եւ նույնականացման համարը (առկայության դեպքում),

դ) հաշվեկշիռը կամ արժեքը (այդ թվում՝ Կանխիկ արժեքի ապահովագրական պայմանագրի կամ Անուիտետային պայմանագրի դեպքում՝ կանխիկ արժեքը կամ հետգնման արժեքը) համապատասխան օրացուցային տարվա կամ այլ համապատասխան հաշվետու ժամանակահատվածի ավարտի դրությամբ, կամ եթե հաշիվը փակվել է տվյալ տարվա կամ ժամանակահատվածի ընթացքում՝ հաշվի փակումը.

ե) Պահառուական հաշվի դեպքում՝

1) հաշվում պահվող ակտիվների նկատմամբ գոյացած տոկոսների ընդհանուր համախառն գումարը, շահաբաժինների ընդհանուր համախառն գումարը եւ այլ եկամուտների ընդհանուր համախառն գումարը՝ օրացուցային տարվա կամ այլ համապատասխան հաշվետու ժամանակահատվածում հաշվին (կամ հաշվի մասով) վճարվելու կամ մուտքագրվելու յուրաքանչյուր դեպքում. եւ

2) օրացուցային տարվա ընթացքում կամ այլ համապատասխան հաշվետու ժամանակահատվածում հաշվին վճարված կամ մուտաքագրված ֆինանսական ակտիվների վաճառքից կամ մարումից ստացված ընդհանուր համախառն շահույթը, որոնց մասով Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատությունը հանդես է եկել որպես Հաշվետիրոջ պահառու, բրոքեր, անվանատեր կամ գործակալ.

զ) Դեպոզիտային հաշվի դեպքում՝ օրացուցային տարվա ընթացքում կամ այլ համապատասխան հաշվետու ժամանակահատվածում հաշվին վճարված կամ

մուտքագրված տոկոսների ընդհանուր համախառն գումարը, եւ

է) 2-րդ պարբերության «ե» կամ «զ» ենթապարբերություններով չնախատեսված ցանկացած հաշվի դեպքում՝ օրացուցային տարվա ընթացքում կամ այլ համապատասխան հաշվետու ժամանակահատվածում Հաշվետիրոջ հաշվին վճարված կամ մուտքագրված ընդհանուր համախառն գումարը, որի նկատմամբ Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատությունը հանդես է գալիս որպես պարտավորություններ ստանձնած անձ կամ պարտապան, այդ թվում՝ օրացուցային տարվա ընթացքում կամ այլ համապատասխան հաշվետու ժամանակահատվածում Հաշվետիրոջը վճարված ցանկացած հետգնման վճարների ընդհանուր գումարը:

## ՀՈԴՎԱԾ 3

### Տեղեկությունների փոխանակման ժամանակացույցը եւ եղանակները

1. 2-րդ հոդվածում նշված տեղեկությունների փոխանակման նպատակով՝ Հաշվետվության ենթակա հաշվին կատարված վճարների չափը եւ բնույթը կարող է որոշվել տեղեկությունները փոխանակող Պետության հարկային օրենսդրության սկզբունքներին համապատասխան:

2. 2-րդ հոդվածում նշված տեղեկությունների փոխանակման նպատակով՝ փոխանակված տեղեկություններում կնշվի արժույթը, որով յուրաքանչյուր համապատասխան գումար արտահայտված է:

3. Հաշվի առնելով 2-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը եւ համաձայն 7-րդ հոդվածով սահմանված ծանուցման ընթացակարգերի, ներառյալ՝ դրանում նշված ամսաթվերը, տեղեկությունները պետք է փոխանակվեն Հավելված Զ-ում նշված տարվանից սկսած այն օրացույցային տարվա ավարտից հետո ինն ամսվա ընթացքում, որին վերաբերում են տեղեկությունները: Չնայած վերոնշյալ նախադասությանը՝ տվյալ օրացուցային տարվա համար անհրաժեշտ է փոխանակել տեղեկությունները, եթե միայն երկու Իրավասու մարմինները

գործողության մեջ են դրել սույն Համաձայնագիրը եւ նրանց համապատասխան Պետությունները գործողության մեջ են դրել այնպիսի օրենսդրություն, որով պահանջվում է հաշվետվությունների ներկայացում տվյալ օրացուցային տարվա համար՝ 2-րդ հոդվածով նախատեսված փոխանակման շրջանակին եւ Միասնական հաշվետվողական ստանդարտում առկա հաշվետվությունների ներկայացման եւ պատշաճ ստուգումների ընթացակարգերին համապատասխան:

4. [հանվել է]

5. Իրավասու մարմիններն ավտոմատ կերպով փոխանակում են 2-րդ հոդվածում ներկայացված տեղեկությունները միասնական հաշվետվողական ստանդարտի սխեմայով՝ Նշագրման ընդլայնվող լեզվով (XML):

6. Իրավասու մարմինները մշակում եւ համաձայնեցնում են տվյալների փոխանցման մեկ կամ մի քանի մեթոդներ, այդ թվում՝ գաղտնագրման չափանիշները՝ ստանդարտացումն առավելագույնի հասցնելու եւ բարդությունները եւ ծախսերը նվազագույնի հասցնելու համար, եւ նշում են դրանք Հավելված Բ-ում:

## *ՀՈԴՎԱԾ 4*

## **Համաձայնագրի կիրառման եւ կատարման հարցերով համագործակցությունը**

Իրավասու մարմինը մյուս Իրավասու մարմնին ծանուցում է, երբ առաջին Իրավասու մարմինը հիմքեր ունի կարծելու, որ սխալը կարող է դարձած լինել տեղեկությունների ոչ ճիշտ կամ թերի տրամադրման պատճառ, կամ Հաշվետվություն տրամադրող ֆինանսական հաստատության կողմից չի ապահովվել Միասնական հաշվետվողական ստանդարտով նախատեսված՝ հաշվետվության տրամադրման գործող պահանջներին եւ համալիր ստուգման ընթացակարգերին համապատասխանությունը: Այդպիսի ծանուցում ստացած Իրավասու մարմինը ձեռնարկում է իր ներպետական օրենսդրությամբ

նախատեսված բոլոր անհրաժեշտ միջոցառումները՝ ծանուցման մեջ մատնանշված սխալները եւ անհամապատասխանությունները վերացնելու համար:

### *ՀՈԴՎԱԾ 5*

## **Գաղտնիության պահպանման եւ տվյալների պաշտպանության երաշխիքները**

1. Փոխանակվող բոլոր տեղեկությունների նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայով նախատեսված գաղտնիության պահպանման կանոնները եւ այլ երաշխիքներ, այդ թվում՝ փոխանակվող տեղեկությունների օգտագործումը սահմանափակող դրույթներն այն չափով, որը պահանջվում է անձնական տվյալների պաշտպանության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար՝ այն երաշխիքների համաձայն, որոնք կարող են տեղեկություններ տրամադրող Իրավասու մարմնի կողմից նշվել որպես իր ներպետական օրենսդրությամբ պահանջվող, եւ որոնք թվարկված են Հավելված Գ-ում:

2. Իրավասու մարմինը Համակարգող մարմնի քարտուղարությանն անհապաղ տեղեկացնում է գաղտնիության պարտավորության ցանկացած խախտման կամ երաշխիքների չկատարման եւ արդյունքում կիրառված ցանկացած պատժամիջոցի եւ հետեւանքների վերացման նպատակով ձեռնարկված գործողությունների վերաբերյալ: Համակարգող մարմնի քարտուղարությունը տեղեկացնում է այն բոլոր Իրավասու մարմիններին, որոնց համար սույն Համաձայնագիրը համարվում է առաջին հիշատակված Իրավասու մարմնի հետ գործողության մեջ մտած Համաձայնագիր:

## *ՀՈԴՎԱԾ 6*

**Խորհրդակցությունները եւ փոփոխությունները**

1. Եթե սույն Համաձայնագրի կիրարկման կամ մեկնաբանության կապակցությամբ առաջանում է որեւէ խնդիր, ապա Իրավասու մարմինները կարող են հայցել Իրավասու մարմիններից մեկի կամ մի քանիսի հետ խորհրդակցություն՝ սույն Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով պատշաճ միջոցառումներ մշակելու համար: Իրավասու մարմինը, որը հայցել է խորհրդակցություն, անհրաժեշտության դեպքում ապահովում է, որ Համակարգող մարմնի քարտուղարությունը տեղեկացվի մշակված ցանկացած միջոցառման մասին, իսկ Համակարգող մարմնի քարտուղարությունը մշակված միջոցառումների մասին տեղեկացնում է բոլոր Իրավասու մարմիններին, նույնիսկ այն Իրավասու մարմիններին, որոնք չեն մասնակցել խորհրդակցություններին:

2. Սույն Համաձայնագրում կարող են փոփոխություններ կատարվել այն բոլոր Իրավասու մարմինների գրավոր համաձայնությամբ ձեռք բերված ընդհանուր համաձայնությամբ, որոնց համար սույն Համաձայնագիրը գործողության մեջ է դրվել: Այլ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում այդ փոփոխություններն ուժի մեջ են մտնում այդպիսի գրավոր համաձայնության վերջին ստորագրման օրվանից հետո մեկամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը:

### *ՀՈԴՎԱԾ 7*

### ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

1. Իրավասու մարմինը սույն Համաձայնագրի ստորագրման պահին կամ իր Պետության կողմից Միասնական հաշվետվողական ստանդարտի կիրարկման համար անհրաժեշտ օրենսդրական մեխանիզմների ներդնումից հետո հնարավորինս շուտ Համակարգող մարմնի քարտուղարությանն է ուղարկում ծանուցում, որով՝

ա) նշվում է այն մասին, որ իր Պետության կողմից ներդրվել են Միասնական հաշվետվողական ստանդարտի կիրարկման համար անհրաժեշտ օրենքներ՝ նշելով ուժի մեջ մտնելու ամսաթվերը՝ կապված Նախկինում գոյություն ունեցած հաշիվների, Նոր հաշիվների հետ, ինչպես նաեւ հաշվետվությունների տրամադրման եւ պատշաճ ստուգումների ընթացակարգերի կիրառման կամ դրանք ավարտելու փաստը,

բ) ճշգրտվում է, թե արդյոք Պետությունը ընդգրկվելու է Հավելված Ա-ում նշված ցանկում,

գ) նշվում է տվյալների փոխանցման, այդ թվում՝ գաղտնագրման մեկ կամ մի քանի մեթոդ (Հավելված Բ),

դ) նշվում են անձնական տվյալների պաշտպանության երաշխիքները, եթե այդպիսիք առկա են (Հավելված Գ),

ե) նշվում է, որ այն ձեռնարկել է պատշաճ միջոցառումներ՝ գաղտնիության պահպանման եւ տվյալների պաշտպանության անհրաժեշտ երաշխիքների չափանիշներին համապատասխանությունն ապահովելու համար՝ կից ներկայացնելով գաղտնիության պահպանման եւ տվյալների պաշտպանության երաշխիքների վերաբերյալ լրացված հարցաշարը, որը պետք է ներառվի Հավելված Դ-ում, եւ

գ) նշվում է Իրավասու մարմինների Պետությունների ցանկը, որոնց մասով նախատեսվում է սույն Համաձայնագիրը գործողության մեջ դնել՝ ներպետական օրենսդրական ընթացակարգերի իրականացումից հետո (եթե առկա են):

Իրավասու մարմինները պետք է Համակարգող մարմնի քարտուղարությանը անհապաղ տեղեկացնեն վերոնշյալ հավելվածներում կատարվող ցանկացած հետագա փոփոխության մասին:

2.1. Սույն համաձայնագիրը երկու Իրավասու մարմինների միջեւ գործողության մեջ կմտնի հետեւյալ երկու ամսաթվերից ամենաուշ ամսաթվին՝ i) այն ամսաթիվը, երբ երկու Իրավասու մարմիններից երկրորդը, 1-ին պարբերության համաձայն, Համակարգող մարմնի քարտուղարություն է ուղարկել ծանուցում՝ միաժամանակ նշելով մյուս Իրավասու մարմնի Պետությունը՝ 1-ին պարբերության «գ» ենթապարբերության համաձայն, եւ կիրառելիության դեպքում՝ ii) այն ամսաթիվը, երբ Կոնվենցիան ուժի մեջ է մտել եւ երկու Պետությունների համար էլ գործում է:

2.2. Համակարգող մարմնի քարտուղարությունը կվարի ցանկ, որը կհրապարակվի այն Իրավասու մարմինների՝ ՏՀԶԿ-ի կայքում, որոնք ստորագրել են Համաձայնագիրը, եւ որոնց միջեւ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտել (Հավելված Ե):

2.3. Համակարգող մարմնի քարտուղարությունը ՏՀԶԿ-ի կայքում կհրապարակի 1-ի պարբերության «ա» եւ «բ» ենթապարբերությունների համաձայն Իրավասու մարմինների կողմից տրամադրված տեղեկությունները: 1-ին պարբերության «գ»-ից «զ» ենթապարբերությունների համաձայն տրամադրված տեղեկությունները կտրամադրվեն այլ ստորագրող կողմերի՝ Համակարգող մարմնի քարտուղարությանն ուղարկված գրավոր պահանջի հիման վրա:

3. Իրավասու մարմինը կարող է կասեցնել սույն Համաձայնագրի շրջանակներում կատարվող տեղեկությունների փոխանակումը՝ Իրավասու մարմնին ուղարկելով գրավոր ծանուցում այն մասին, որ վերջինս թույլ է տվել սույն Համաձայնագրի էական խախտում: Այդ կասեցումը գործողության մեջ է մտնում անմիջապես: Սույն պարբերության իմաստով «էական խախտումը» ներառում է, ի թիվս այլնի, սույն Համաձայնագրի եւ Կոնվենցիայի գաղտնիության պահպանման եւ տվյալների պաշտպանության երաշխիքների վերաբերյալ դրույթների չկատարումը, Իրավասու մարմնի կողմից սույն Համաձայնագրով սահմանված կարգով ժամանակին կամ պատշաճ տեղեկությունների չտրամադրումը կամ Իրավաբանական անձանց եւ հաշիվների համար «Հաշվետվություն չտրամադրող ֆինանսական հաստատություններ» եւ «Բացառված հաշիվներ» կարգավիճակի սահմանումը՝ խափանելով Միասնական հաշվետվողական ստանդարտի նպատակները:

4. Իրավասու մարմինը կարող է դադարեցնել իր մասնակցությունը սույն Համաձայնագրին կամ կոնկրետ Իրավասու մարմնի մասով՝ Համակարգող մարմնի քարտուղարություն ուղարկելով դադարեցման մասին գրավոր ծանուցում: Այդ դադարեցումն ուժի մեջ է մտնում դադարեցման մասին ծանուցումն ստանալու օրվանից հետո 12-ամսյա ժամկետը լրանալուն հաջորդող ամսվա առաջին օրը: Դադարեցման դեպքում սույն Համաձայնագրի շրջանակներում նախկինում ստացված բոլոր տեղեկությունները շարունակում են մնալ գաղտնի, եւ դրանց նկատմամբ գործում են Կոնվենցիայի պայմանները:

### *ՀՈԴՎԱԾ 8*

### Համակարգող մարմնի քարտուղարությունը

1. Սույն Համաձայնագրով այլ բան նախատեսված չլինելու դեպքում Համակարգող մարմնի քարտուղարությունը բոլոր Իրավասու մարմիններին տեղեկացնում է այն բոլոր ծանուցումների մասին, որոնք այն ստացել է սույն

Համաձայնագրի շրջանակներում, եւ Համաձայնագիրը ստորագրող բոլոր կողմերին ուղարկում է ծանուցում, երբ Համաձայնագիրը ստորագրում է նոր Իրավասու մարմին:

2. Համաձայնագիրը ստորագրող բոլոր կողմերը տարեկան կտրվածքով հավասարապես կրում են Համակարգող մարմնի քարտուղարության կողմից Համաձայնագրի կիրարկումը վարելու հետ կապված ծախսերը: Չնայած նախորդ նախադասությանը՝ պահանջներին համապատասխանող երկրները կազատվեն ծախսերը համատեղ կրելուց՝ համաձայն Կոնվենցիայի Համակարգող մարմնի Աշխատակարգային կանոնների X հոդվածի:

Կատարված է անգլերենով եւ ֆրանսերենով. երկու տեքստերն էլ հավասարազոր են:

**Օրենսդրության և պատշաճ ուսումնասիրության վերջնաժամկետներ**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ՀԱՄԱՁԱՅՆ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ» ՄԱՍԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 7(1)(Ա) ԿԵՏԻ**

05 նոյեմբեր 2024

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը սույնով ծանուցում է Համակարգող մարմնի քարտուղարությանը հետևյալը.

Հայաստանի Հանրապետությունն ունի անհրաժեշտ օրենսդրական հիմքեր Միասնական հաշվետվողական ստանդարտի ներդրման համար: Օրենսդրությունը ներառում է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը կցվում է սույն ծանուցմանը:

Համաձայն վերոհիշյալ օրենքի՝ Հայաստանի Հանրապետությունում Միասնական հաշվետվողական ստանդարտի համաձայն Ֆինանսական հաշիվների առաջին պատշաճ ուսումնասիրության և առաջին փոխանակման ժամկետները հետևյալն են.

| **Հաշիվներ** | **Սահմանվում է որպես** | **Տեղեկության առաջին փոխանակում** | | |
|---|---|---|---|---|
| **Նոր հաշիվներ** | Հաշվետու ֆինանսական հաստատության կողմից վարվող ֆինանսական հաշիվ, որը բացվել է 2024 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո | Սեպտեմբեր 2025 | | |
| | | **Անհատական բարձր հաշիվ ունեցող հաշիվներ** | **Անհատական բարձր հաշիվ ունեցող հաշիվներ** | **Կազմակերպության հաշիվներ** |
| **Գործող հաշիվներ** | 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվետու ֆինանսական հաստատության կողմից վարվող ֆինանսական հաշիվ | Սեպտեմբեր 2025 | Սեպտեմբեր 2025 | Սեպտեմբեր 2025 |

Սույն ծանուցումը համարվում է գործող այնքան ժամանակ, քանի դեռ Համակարգող մարմնի քարտուղարությունը չի տեղեկացվել սույն ծանուցման մեջ ցանկացած փոփոխության մասին:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ]
___________________________
Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի համար
Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյան

**Փոխանցում և գաղտնագրում**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ՀԱՄԱՁԱՅՆ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ» ՄԱՍԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ**
**7(1)(Գ) ԿԵՏԻ**

05 նոյեմբեր 2024

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը սույնով ծանուցում է Համակարգող մարմնի քարտուղարությանը, որ նախատեսում է փոխանցել «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման» մասին Բազմակողմ համաձայնագրի 2-րդ բաժնի համաձայն փոխանակվող տեղեկատվությունը հետևյալ փոխանցման եղանակով սահմանված միջոցներով և համապատասխան.

- ՏՀՁԿ-ի փոխանցման միասնական համակարգ;

Սույն ծանուցումը համարվում է գործող այնքան ժամանակ, քանի դեռ Համակարգող մարմնի քարտուղարությունը չի տեղեկացվել սույն ծանուցման մեջ ցանկացած փոփոխության մասին:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

______________________________
Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի համար
Պետական եկամուտների կոմիտեի նախագահ Ռուստամ Բադասյան

**Գաղտնիության կանոններ և տվյալների պաշտպանություն**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ՀԱՄԱՁԱՅՆ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ» ՄԱՍԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 7(1)(ե) ԿԵՏԻ**

05 նոյեմբեր 2024

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը սույնով ծանուցում է Համակարգող մարմնի քարտուղարությանը, որ ներդրված են համապատասխան միջոցներ՝ ապահովելու համար պահանջվող գաղտնիության և տվյալների պաշտպանության ստանդարտները, որոնք նախատեսված են «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման» մասին Բազմակողմ համաձայնագրի 5-րդ բաժնով և ՏՀԶԿ Հարկային հարցերով փոխադարձ վարչական աջակցության մասին կոնվենցիայի 22-րդ հոդվածով:

Սույն ծանուցման նպատակներով Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը ցանկանում է հիմնվել Հայաստանի Հանրապետության կողմից լրացված գաղտնիության և տվյալների պաշտպանության հարցաշարի վրա, որը կցված է սույն ծանուցմանը և նախատեսված է «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման» մասին Բազմակողմ համաձայնագրի Հավելված Դ-ով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գաղտնիության գնահատման վերջնական հաշվետվությանը, որը նախատեսված է Հարկային նպատակներով թափանցիկության և տեղեկատվության փոխանակման գլոբալ ֆորումի կողմից ավտոմատ տեղեկատվության փոխանակման (ԱՏՓ) շրջանակներում գաղտնիության և տվյալների պաշտպանության գնահատման մեխանիզմով (CTPA/GFTEI/APRG+/CDS(2024)20/REV1):

Սույն ծանուցումը համարվում է գործող այնքան ժամանակ, քանի դեռ Համակարգող մարմնի քարտուղարությունը չի տեղեկացվել սույն ծանուցման մեջ ցանկացած փոփոխության մասին:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

____________________________
Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի համար
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի Ռուստամ Բադասյան

**Տվյալների պաշտպանության պահանջներ**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ՀԱՄԱՁԱՅՆ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ» ՄԱՍԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ**
**7(1)(Դ) ԿԵՏԻ**

05 նոյեմբեր 2024

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը սույնով ծանուցում է Համակարգող մարմնի քարտուղարությանը, որ չի ցանկանում լրացուցիչ ճշգրտումներ կատարել տվյալների պաշտպանության իր օրենսդրության առնչությամբ՝ համաձայն 7(1)(դ) բաժինի:

Սույն ծանուցումը համարվում է գործող այնքան ժամանակ, քանի դեռ Համակարգող մարմնի քարտուղարությունը չի տեղեկացվել սույն ծանուցման մեջ ցանկացած փոփոխության մասին:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

______________________________

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի համար
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի Ռուստամ Բադասյան

**Նախատեսված փոխանակվող գործընկերների ցանկ (թարմացված ձևանմուշ)**

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ՀԱՄԱՁԱՅՆ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ» ՄԱՍԻՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 7(1)(Զ) ԿԵՏԻ**

05 նոյեմբեր 2024

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը սույնով ծանուցում է Համակարգող մարմնի քարտուղարությանը, որ «Ֆինանսական հաշիվների վերաբերյալ տեղեկությունների ավտոմատ փոխանակման» մասին Բազմակողմ համաձայնագրով նախատեսված փոխանակվող գործընկերների ընթացիկ ցանկը հետևյալն է.

| Nr | Իրավասու մարմինների ենթադատություններ | Նախատեսված փոխանակվող գործընկերներ *(նշիր եթե նախատեսված է)* |
|---|---|---|
| 1. | Ալբանիա | √ |
| 2. | Անդորրա | √ |
| 3. | Անգուիլա | √ |
| 4. | Անտիգուա և Բարբուդա | √ |
| 5. | Արգենտինա | √ |
| 6. | Հայաստան | |
| 7. | Արուբա | √ |
| 8. | Ավստրալիա | √ |
| 9. | Ավստրիա | √ |
| 10. | Ադրբեջան | |
| 11. | Բահամյան կղզիներ | √ |
| 12. | Բահրեյն | √ |
| 13. | Բարբադոս | √ |
| 14. | Բելգիա | √ |
| 15. | Բելիզ | √ |
| 16. | Բերմուդյան կղզիներ | √ |
| 17. | Բրազիլիա | √ |
| 18. | Բրիտանական Վիրջինյան կղզիներ | √ |
| 19. | Բրունեյ | √ |
| 20. | Բուլղարիա | √ |
| 21. | Կամերուն | √ |
| 22. | Կանադա | √ |
| 23. | Կայմանյան կղզիներ | √ |
| 24. | Չիլի | √ |
| 25. | Չինաստան (ՉԺՀ) | √ |

| | | |
|---|---|---|
| 26. | Կոլումբիա | √ |
| 27. | Կուկի կղզիներ | √ |
| 28. | Կոստա Ռիկա | √ |
| 29. | Խորվաթիա | √ |
| 30. | Կյուրասաո | √ |
| 31. | Կիպրոս | √ |
| 32. | Չեխիա | √ |
| 33. | Դանիա | √ |
| 34. | Դոմինիկա | √ |
| 35. | Էկվադոր | √ |
| 36. | Էստոնիա | √ |
| 37. | Ֆարերյան կղզիներ | √ |
| 38. | Ֆինլանդիա | √ |
| 39. | Ֆրանսիա | √ |
| 40. | Վրաստան | √ |
| 41. | Գերմանիա | √ |
| 42. | Գանա | √ |
| 43. | Ջիբրալթար | √ |
| 44. | Հունաստան | √ |
| 45. | Գրենլանդիա | √ |
| 46. | Գրենադա | √ |
| 47. | Գերնսի | √ |
| 48. | Հոնկոնգ (Չինաստան) | √ |
| 49. | Հունգարիա | √ |
| 50. | Իսլանդիա | √ |
| 51. | Հնդկաստան | √ |
| 52. | Ինդոնեզիա | √ |
| 53. | Իռլանդիա | √ |
| 54. | Իսրայել | √ |
| 55. | Մեն կղզի | √ |
| 56. | Իտալիա | √ |
| 57. | Ջամայկա | √ |
| 58. | Ճապոնիա | √ |
| 59. | Ջերսի | √ |
| 60. | Ղազախստան | √ |
| 61. | Քենիա | √ |
| 62. | Կորեա | √ |
| 63. | Քուվեյթ | √ |
| 64. | Լատվիա | √ |
| 65. | Լիբանան | √ |
| 66. | Լիբերիա | √ |
| 67. | Լիխտենշտայն | √ |
| 68. | Lithuania – Լիտվա | √ |
| 69. | Luxembourg – Լյուքսեմբուրգ | √ |
| 70. | Մակաո (Չինաստան) | √ |

| | | |
|---|---|---|
| 71. | Մալայզիա | √ |
| 72. | Մալդիվներ | √ |
| 73. | Մալթա | √ |
| 74. | Մարշալյան կղզիներ | √ |
| 75. | Մավրիկիոս | √ |
| 76. | Մեքսիկա | √ |
| 77. | Մոլդովա | √ |
| 78. | Մոնակո | √ |
| 79. | Մոնտենեգրո | √ |
| 80. | Մոնտսերրատ | √ |
| 81. | Մարոկկո | √ |
| 82. | Նաուրու | √ |
| 83. | Նիդեռլանդներ | √ |
| 84. | Նոր Կալեդոնիա | √ |
| 85. | Նոր Զելանդիա | √ |
| 86. | Նիգերիա | √ |
| 87. | Նիուե | √ |
| 88. | Նորվեգիա | √ |
| 89. | Օման | √ |
| 90. | Պակիստան | |
| 91. | Պանամա | √ |
| 92. | Պերու | √ |
| 93. | Լեհաստան | √ |
| 94. | Պորտուգալիա | √ |
| 95. | Քաթար | √ |
| 96. | Ռումինիա | √ |
| 97. | Ռուսաստանի Դաշնություն | √ |
| 98. | Ռուանդա | √ |
| 99. | Սենթ Կիթս և Նևիս | √ |
| 100. | Սենթ Լուսիա | √ |
| 101. | Սենթ Վինսենտ և Գրենադիններ | √ |
| 102. | Սամոա | √ |
| 103. | Սան Մարինո | √ |
| 104. | Սաուդյան Արաբիա | √ |
| 105. | Սենեգալ | √ |
| 106. | Սեյշելներ | √ |
| 107. | Սինգապուր | √ |
| 108. | Սինտ Մարտեն | √ |
| 109. | Սլովակիա | √ |
| 110. | Սլովենիա | √ |
| 111. | Հարավաֆրիկյան Հանրապետություն | √ |
| 112. | Իսպանիա | √ |
| 113. | Շվեդիա | √ |

| | | |
|---|---|---|
| 114. | Շվեյցարիա | √ |
| 115. | Թայվանդ | √ |
| 116. | Թուրքիա | |
| 117. | Թուրկս և Քայկոս կղզիներ | √ |
| 118. | Ուգանդա | √ |
| 119. | Ուկրաինա | √ |
| 120. | Միացյալ Արաբական Էմիրություններ | √ |
| 121. | Միացյալ Թագավորություն | √ |
| 122. | Ուրուգվայ | √ |
| 123. | Վանուատու | √ |

Ընտրելով ենթադատությունը որպես փոխանակման նախատեսվող գործընկեր՝ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը հաստատում է իր իրավասության համապատասխանությունը տվյալների պաշտպանության պահանջներին, որոնք նշված են մյուս իրավասության ծանուցման մեջ, ըստ 7-րդ բաժնի 1(դ) հոդվածի, եթե այդպիսիք կան և ինչպես նշված է սույն ծանուցման ամսաթվին:

Հայաստանի Հանրապետությունը սույնով ծանուցում է Համակարգող մարմնի քարտուղարությանը, որ նրա ֆինանսական տարին սկսվում է հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31:

Սույն ծանուցումը համարվում է գործող այնքան ժամանակ, քանի դեռ Համակարգող մարմնի քարտուղարությունը չի տեղեկացվել սույն ծանուցման մեջ ցանկացած փոփոխության մասին:

[ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ]

______________________________

Հայաստանի Հանրապետության իրավասու մարմնի համար
Պետական եկամուտների կոմիտեի նախագահի Ռուստամ Բադասյան